Խաչիկ Դաշտենց

Ռանչպարների Կանչը

2

ՍԱՄԻՐՈՎ ՃԱՇ

Քաղաքից հեռանալով, ես բռնեցի Քանասարի ճանապարհը: Բայց հանկարծ վարանում եկավ վրաս: Դեպի ո՛ր կողմը գնալ: Բարձրանալ դեպի Սասուն, թե իջնել Մշո դաշտ: Դեպի Սասուն գնալու համար ես պետք է բարձրանայի Սիմ լեռան լանջերն ի վեր և նրա գագաթներից մեկով, որ ճանճիկ էր կոչվում, շրջվեի Շենիք և Սեմալ գյուղերի վրա: Մշո դաշտ գնալու համար՝ պետք է շարժվեի Քանասարի լանջերով՝ ուղղություն վերցնելով դեպի արևելք: Քանի որ բռնել էի վերջին ճանապարհը, որոշեցի շարունակել այն:

Իմ ետևում մնաց Մուշ քաղաքը իր աղջկանց վարժարանի նորակառույց շենքով: Այդ շինության վրա մի ժամանակ ես էլ էի աշխատում, օգնելով իմ Հովհաննես հորեղբորը, որ որմնադիր էր այնտեղ: Քար ու շաղախ էի կրում, որ հայոց աղջիկները կարդան:

Քանասարի վրա մի նշանավոր վայր կար, որ Ծծմակա Քիթ էր կոչվում: Ծծմակը քարքարոտ բազուկներից մեկն էր, որ կտրուկ իջնելով վերջանում էր Մշո դաշտի մեջ, Ալվառինջ գյուղի ետևում:

Երեք գյուղ կար Մշո դաշտում, ուր բնակիչները կաթոլիկ էին՝ Հավատորիկ, Բերդակ և Նորշեն:

Յատուկ Պոէմ

Ես աննկատելի հասել էի վերջին երկու գյուղի սահմանագլխին և պատրաստվում էի Ալվառինջի մոտով դեպի Ծղծմակ բարձրանալ, երբ տեսա երկու մարդ վազում են իմ ետևից: Մեկը նորշենցի էր, իսկ մյուսը՝ բերդակցի: Նորշենցին միջակից քիչ ցածր էր, բարակ կեռ բեղերով, ձեռքին մի կծիկ պարան կար և մի քանի ցցափայտ: Նա գայրացած վիճում էր բերդակցու հետ, որը ոչ մի կերպ չէր համաձայնում պարանի ծայրը բռնել: Նրանք մեկ-երկու տեղով կանգ առան, նորից վիճեցին և համաձայնության չգալով՝ շտապեցին իմ ետևից:

Երևում է դու մշեցի ես և քաղաքից ես գալիս, մի եկ էս չվանի ծայրը պահիր՝ սահմանը որոշենք, ասաց նորշենցին, որին կոչում էին Ֆրանկ-Մոսո, և իմ թևից քաշելով պարանի ծայրը զոռով դրեց բոիս մեջ:

Դե հիմա գնա դեպի Բերդակ գյուղի Սալով աղբյուրի կողմը: Ես չվանը կամաց-կամաց կարձակեմ քո ետևից, որտեղ կասեմ՝ կանգնիր, կկանգնես, ասաց Ֆրանկ-Մոսոն և իր մոտի ցցափայտերը ինձ տալով՝ հրամայեց, որ առաջանամ:

Վերցրի ցցերն ու գլուխս դեպի նրա ցույց տված կողմը ուղղելով, շարժվեցի առաջ, իմ ետևից քարշ տալով պարանը:

Էդտեղ կանգնիր, գոռաց Ֆրանկ-Մոսոն իմ ետևից և դառնալով բերդակցուն՝ ասաց. երկայնքը վաթսուն չվան է, իսկ լենքը եղավ քսան չվան ու կես: Էլի՛ գնա, հրամայեց նորշենցին, ու ես, պարանի ծայրը մեջքիս ետև բռնած, ցցերը թևատակիս շարժվեցի առաջ:

Էդտեղ կանգնիր: Էս եղավ հիսուներկու չվան ու կես, ազդարարեց նորշենցին:

Իսկ հիմա երեք չվան ետ արի ու գնա դեպի Նորշենի կողմը, կարգադրեց բերդակցին՝ պարանի ծայրը նորշենցու ձեռքից բարկությամբ վերցնելով:

Այս անգամ ես կատարեցի բերդակցու հրամանը: Այդ մարդիկ ինձ այնքան տարան ու բերեցին մերթ դեպի Բերդակի, մերթ դեպի Նորշենի կողմը, որ ես հոգնեցի քարափից-քարափ գնալով, մի հանդից մյուսը վազվզելով:

Յատուկ Պոէմ

Նորշենցին ու բերդակցին նորից սկսեցին տաքացած վիճել: Բերդակցին բարկությունից նորշենցիներին անվանում էր «գրիրա (կրյա) ուտող), իսկ նորշենցին բերդակցիներին՝ «շաղգամ ուտող գավոցի", և քիչ մնաց գործը տուրուդմբոցի հասներ»

Պատմությունը իմացա:

Այս երկու գյուղերի միջև սահմանային վեճ կար: Մեկը մյուսի սահմանաքարերը հանելով՝ գիշերով գաղտնի փոխադրում էր մյուսի կողմը՝ հանած քարերի հետքերը վարպետորեն ջնջելով: Սահմանային այդ վեճը այնպիսի սուր բնույթ էր ընդունել, որ նույնիսկ կռիվներ էին տեղի ունեցել մեկ-երկու քարափի կամ խանդակի համար: Մի քանի անգամ պաշտոնական մարդիկ էին եկել կենտրոնից և չէին կարողացել հաշտություն կայացնել դրանց միջև:

Չեղա՛վ, ասել էր բերդակցին:

Չեղա՛վ, պնդել էր նորշենցին:

Եվ ահա այս երկու հարևան գյուղերի ներկայացուցիչները համայնքների կողմից լիազորված իջել էին դաշտ՝ իրենց գյուղամիջյան սահմանը վերջնականապես ճշտելու: Եվ որովհետև բերդակցիները գավառի, այսինքն Սասունի կողմից գաղթած լեռնականներ էին և իրենց շաղգամի արտերը և խոտհարքները չափում էին պարանով, ինչպես իրենց պապերն էին արել, ուստի բերդակցին առաջարկել էր սահմանային վեճը լուծել անպայման պարանի օգնությամբ:

Նորից ինձ տարան ու բերին քարափից-քարափ և այնքան վիճեցին, որ իրենք էլ հոգնեցին, ես էլ: Երբ չվանը տանում էի դեպի Բերդակի հողային տարածությունները, բերդակցին էր գոռում նորշենցու վրա, երբ Նորշենի կողմն էի տանում, նորշենցին էր նեղանում ու խռոված հեռանում:

Չեղա՛վ, ասում էր բերդակցին:

Չեղա՛վ, պնդում էր նորշենցին:

Պաշտոնյաներից մեկը արել էր այսպիսի մի առաջարկություն. «Գնացեք ձեր տները, ամեն մեկդ ձեր ուզած ձևով մի ճաշ եփել տվեք, լցրեք հողե ամանների մեջ և նույն ժամին հավասար քայլով ճամփա ընկեք դեպի դաշտ: Որտեղ ձեր ճաշերը սառեցին, այնտեղ էլ կդրվի ձեր սահմանը»:

Տեսան, որ համաձայնության չեն գալիս, որոշեցին հարցը այդ ձևով կարգավորել: Ինձ վկա գրեցին վիճելի սահմանի վրա, մոտս թողնելով պարանի կծիկն ու ցցափայտերը, իսկ իրենք գնացին, մեկը՝ դեպի Բերդակ, մյուսը՝ Ֆրանկ-Նորշեն:

Ճիշտն ասած, ես էլ դեմ չէի, որ հարցը այդ ձևով լուծվի, որովհետև այդ գյուղերի հանդերը չափչփելով այնպես էի հոգնել ու քաղցել, որ սիրով կուզենայի բաժին ունենալ նրանց եփած ճաշերից:

Ես այդտեղ սպասեցի մինչև եղավ կեսօր: Մեկ էլ վեր նայեցի՝ տեսնեմ գալիս են, բերդակցին՝ Բերդակի կողմից, Ֆրանկ-նորշենցին՝ Նորշենի: Գալիս էին հավասար քայլով, ինչպես պայմանավորվել էին, և հանդիսավորությամբ, ամեն մեկի ետևից մի քանի մարդ և կին իբրև վկա, նաև երեխաներ, ամանով ճաշերը իրենց կրծքի առաջ երկու ձեռքով պահած:

Հանկարծ Ֆրանկ-Մոսոն իրենց սահմանի մեջ շփոթված կանգ առավ: Նրա եփած ճաշը ձվածեղ էր և սառել էր դեռ չհասած նույնիսկ նախկին սահմանին: Իսկ բերդակցու կինը խորամանկ էր եղել և եփել էր սամիրով ճաշ: Սամիրը դեղին կորեկի տեսք ունեցող գավարսն է: Ծեծում են և նրանից եփում են թանով սամրե ճաշ, որ երկար ժամանակ տաք է մնում:

Բերդակցին անցավ իրենց գյուղի նախկին սահմանը և Հաղթական շարժվեց դեպի նորշենցու կանգնած տեղը, մի քանի ոտնաչափ խորանալով հարևան գյուղի հողային տարածության մեջ: Ես ցիցը տարա և ամրացրի Ֆրանկ-Մոսոյի կանգնած տեղում:

Այդպես հաջորդաբար ամրացրի նաև մյուս ցցերը:

Ու սահմանը որոշվեց ժողովրդական հավատքի ուժով՝ համաձայն պայմանի:

Ձվածեղը բերդակցին կերավ, իսկ սամիրով ճաշը բաժին ընկավ ինձ:

Յատուկ Պոէմ

Վա՛յ, Կաքավ, Մոկնաց Հովհաննեսի աղջիկ, էս չվանի մեջ ավելի շատ խելք կա, քան քո գլխի, բացականչեց Ֆրանկ-Մոսոն իր կնոջ հասցեին, պարանի կծիկն ու մնացած ցցերը իմ ձեռքից առնելով: Աշխարհը քո սիրուն երեսին նայի, թե քո բռնած գործին:

Կնոջ խելքը բնովի է և ոչ թե գնովի, վրա թերեց բեր՛դակցին մանրիկ ծիծաղելով:

Թեպետ հողային սահմանը երկու գյուղերի միջև վճռվեց իրենց պայմանավորված ձևով, բայց ես զգացի, որ Ֆրանկ-նորշենցիները դժգոհ մնացին արդյունքից և նրանցից մեկը նույնիսկ ոտքով աննկատելի զարկեց իմ ձեռքին, երբ ես կռացած վերջին ցիցն էի ամրացնում:

Կողմերը շարժվեցին դեպի իրենց գյուղերը, բերդակցիները ուրախ տրամադրությամբ, նորշենցիները տխուր:

Ամենից տխուրը Ֆրանկ-Մոսոն էր: սա քայլում էր գլուխը կախ, կարծես ամաչելով գյուղ մտնել:

Իսկ իմ մտքերը ուրիշ տեղ էին:

Դաշտեցի այդ երկու հողագործների միջև ծագած վեճը ավարտված համարելով, ես իմ կապոցը վերցրի և Բերդակ գյուղի տակով քայլերս ուղղեցի դեպի Ծծմակի բարձունքները:

ՏԵՐԳԵՂԱՆՔԻ ԳԻՇԵՐԸ

Ծծմակի գագաթի մոտ մի բարձր քարաժայռ կար: Մագլցեցի վեր և նստեցի այդ ժայռին: Կողքիս մի խոր կիրճ էր բացվում, երևում էին վիհեր, անձավներ: Այդ կիրճն ու վիհերը համարվում էին Մշո դաշտի բուք ու բորանի որջերը: Այդտեղից էին ամպրոպն ու մրրիկը որոտմունքով խուժում դաշտի վրա:

Ծծմակը հայտնի էր իր կաքավներով, որոնք վաղ արևածագից մինչև ուշ մայրամուտ կվկվում էին ձորերի ու ծերպերի մեջ, իրենց գունագեղ փետուրները ժայռերին թափելով:

Վարժապետ Սենեքերիմը պատմում էր, որ երբ Մշո դաշտի հեթանոս տաճարները կործանվեցին, նրանց քրմերն ու քրմուհիները քարակաքավներ դարձան ու թռան դեպի ապառաժոտ բլուրները: Նրանց մի մասը թաքնվեց Ծծմակա Քթի ծերպերի մեջ:

Ահա նրանք խմբերով բխում են Ծծմակի քարուտներից և, խախաբալով ու զգույշ պտույտներ գործելով արևի տակ՝ մայրամուտից առաջ շտապում են թաքնվել իրենց խոռոչներում: Մի քանիսը ուղղակի իմ ոտքի տակից թռան և ոլորապտույտ գլորվեցին դեպի ձորը: Ես նայում եմ նրանց և մի տեսակ սրբազան ղող է պատում ինձ. մի՞թե իսկապես դրանք այն հին քրմերի ու քրմուհիների վերափոխված մնացորդներն են:

Բարձր քարաժայռին նստած ես երկար նայեցի Մշո դաշտին: Բայց դաշտի առաջին բնակիչները, ըստ ավանդության, եղել է Սիմ նահապետի սերունդը, որ ջրհեղեղից հետո բնակություն է հաստատել Մշո թիկունքի լեռներին, որոնք նրա անունով այնուհետև կոչվեցին Սիմ: Սիմ նահապետի կրտսեր որդի Տարբանին բաժին ընկավ այդ լեռների առաջ տարածված հարթությունը. այն էլ նրա անունով կոչվեց Տարբանի կամ Տարոնի դաշտ:

Մի ուրիշ բան էլ էր պատմում պարոն Սենեքերիմը: Ոչ, սխալվեցի, այդ պատմողը Մելքոն վարժապետն էր, «Ռանչպարների կանչի» հեղինակը: նա ասում էր, որ Մաշտոցի գրերից առաջ Հայաստանում եղել են քարե հեթանոս մատյաններ: Երբ թշնամին մտել է Տարոն և սկսել է դրանք ջարդել, նրանց միջի բոլոր գրերը մի ակնթարթում դարձել են մեղուներ և աղմկալի դուրս փախչելով քարե մատյաններից՝ պարս են կապել Ծծմակի և Ծիրնկատարի ապառաժներին:

Գնացեք դեպի Ծծմակի կողմերը: Առաքելոց վանքի ճանապարհին, ուր Արաբոյի քարն է, աչքերը սրբելով ասաց մի անգամ Մելքոն վարդապետը, իր մոլեգին սլացքի մեջ անշարժացած մի գագաթ կա թուխ ժայռերով, որ կոչվում է Մեղրի քարեր: Դա մեղրաճանճեր դարձած մեր հին ու հալածական գրերի հավերժական բնակավայրն է: Իմաստության փոխարեն նրանք այժմ որձաքարերի խոռոչներից կախված մեղր են շինում մարդկանց համար:

Ծծմակա Քթի մեծ ժայռին նստած նայում եմ Մեղրի քարերին: Մեղուները մայրամուտի ցոլքերի մեջ վերջին պտույտներն են գործում իրենց քարե փեթակների շուրջ:

Ալվառինջ գյուղը իմ աչքի առաջ է: Դեպի աջ Տերգեվանքն է, իմ մորաքրոջ գյուղը: Գինեվարդ մորաքույրս խաշած ցորեն է փռել տանիքին: Սարի կողերով շինականներ են իջնում դեպի գյուղ: Առաքելոց վանքից են գալիս: Գնացել են մոմեր վառելու Դավիթ Անհաղթի գերեզմանին: Մորաքույրս ինձ մի օր վանքում տեսնելով՝ ասաց. «Դու էլ մի մոմ կպցրու Անհաղթի խաչքարին»: Ես ասացի՝ թող տերգեվանքցիք կպցնեն, իրենց գյուղումն է ծնվել: «Ինչի, դու հայ չե՞ս», նեղացավ վրաս Գինեվարդ մորաքույրս և մի դեղնամոմ վառելով՝ տվեց ձեռքս, ինձ տանելով դեպի վանքի արևելակողմը և չոքեցնելով մի հին խաչքարի առաջ:

Այնքան հափշտակված էի Ծծմակից դեպի Մեղրի քարերը և Ալվառինջ ու Տերգեվանք գյուղերը բացվող տեսարանով, որ աննկատելի իջավ երեկոն: Նախ թանձր մթնեց, ապա երկնքի չորս կողմը առկայծեցին աստղերը, ասես իրարից լույս առնելով:

Գեղեցիկ է գիշերը Մշո դաշտում:

Ահա իմ գլխավերևում կանգնած է Հակոբի ցուպը: Կաթնագույն Հարդագողի եզերքին հետզհետե կամար կապեցին Լուծքն ու Կշեռքը: Մեկը Հավատամք լեռան ետևից ելավ, մյուսը՝ Մանազկերտի բերդի: Լուծքի աստղերը ես հիանալի զանազանում եմ իրարից: Դրանք յոթ սանամոր աստղերն են՝ Մեծ Արջը: Յոթից առաջինը Մածկալն է, մի զույգ գոմեշ և մի զույգ եզ լծած: Վեցերորդը՝ Հոտաղն է Լուծքին նստած, իսկ յոթերորդը՝ զատվորն է, որ մածկալի և հոտաղի համար հաց է բերել դաշտ: Զատվորի կողքին հազիվ նշմարվող մի ուրիշ աստղիկ էլ կա, դա էլ զատվորի շնիկն է:

Շուտով կերևա Բույլքը:

Ուղիղ իմ դիմաց կարմրավուն փայլով շողշողում է մի սիրուն աստղ, որ մի քիչ առաջ Նեմրութի թիկունքից ցատկեց երկինք: Դու նրան մի շփոթիր Լուսաստղի հետ: Դա Քարվան-Կորուսն է, որով շատերն են մոլորվել ճանապարհներին:

Ցուլի պարանոցի վրա վառվեցին Բույլքի աստղերը: Լուսինն ու Լուսաստղը ելան: Ծծմակի քթին նստած տեսնում եմ, թե ինչպես Լուծքն ու Կշեռքը, Լուսաստղն ու Քարվան-Կորուսը փայլփլելով դանդաղորեն շարժվում են Մշո դաշտի վրայով:

Մի աստղիկ դեմ է առել Մեղրի քարերին և շունչը պահած նայում է Սիմ լեռան քերծերից իրեն ժպտացող մի ուրիշ աստղի:

Ուշ գիշեր է: Ինչ-որ մեկը իր արտն է վարում դիմացի լանջին: Երևի Ալվառինջի շինականներից է: Այնպես պարզ լսվում է գութանի ճռռոցը գիշերային խաղաղության մեջ: Եզները հոգնած շարժվում են լեռան կողերով: Ես տեսնում եմ նրանց կարճ ու կեռ եղջյուրները, որ մերթ ստվերի մեջ են ընկնում և մերթ ուժգին փայլում լուսնի տակ:

Գնացի բռնեցի գութանի մաճը և մինչև լուսադեմ վարեցի: Բույլքը այնպես պայծառորեն շողում է երկնքում: Այդ այն ժամն է, երբ ուղևորները ասում են իրար, «Վե՛ր կացեք, Բույլքը ելել է, ճանապարհ ընկնելու ժամանակ է»:

Բայց ես ու՞ր պիտի երթամ և ո՞րն է իմ ժամը ճանապարհ ընկնելու:

Երբ վեջին անգամ նայեցի դեպի երկինք, Մաճկալն անհետացել էր՝ իր հետ տանելով գույգ լծկանին, հոտաղին և գատվորին: Շնիկն էլ չկար: Կշեռքն ու Լուսինն էլ չէին երևում: Մնացել էր միայն Լուսաստղը: Ես Ալվառինջի շինականին թողեցի իր կարճ եղջյուրներով եզների հետ և Լուսաստղի լույսով շարժվեցի Ծծմակն ի վեր: